

Մամլոյ հաղորդագրութիւն

Մելգոնեանի Սանուցը կոչ կ'ընէ Հայկական Բարեգործական
Ընդհանուր Միութեան վերաբանալու Կիպրոսի Մելգոնեան կրթական
հաստատութիւնը

Հիմնուած կեդրոնական համադրող կոմիտէ

Ժընեւ, 25 Փետրուար, 2009- աշխարհասփիռ Մելգոնեան կրթական
հաստատութեան սանուց միութիւններու ներկայացուցիչներ
հանդիպեցան Ժընեւի մէջ եւ վերահաստատեցին իրենց հաւատքը եւ
վճռակամութիւնը թէ պատմական Մելգոնեան դպրոցը պէտք է
վերաբացուի իր ներկայի վայրին մէջ՝ Կիպրոս,որպէս կրթական
կեդրոն մը, ծառայելու Եւրոպայի եւ շրջակայքի հայութեան:

Սանուց միութիւնները կոչ կ'ընեն աշխարհի բոլոր Հայերուն, որոնք
կը հաւատան Հայերէն լեզուի , մշակոյթի և պատմութեան
կարեւորութեան գործունեայ կերպով օժանդակելու իրենց շարժումին:

Սանուց միութիւնները նոյնպէս կոչ կ'ընեն Հայկական
Բարեգործական Ընդհանուր Միութեան կեդրոնական վարչութեան
վերանայելու իրենց որոշումը և արտօնելու որ դպրոցը վերաբացուի:
Այդ ուղութեամբ պատրաստ են համագործակցելու և օժանդակելու:

Սանուց միութիւններու ներկայացուցիչներու հանդիպումը որոշեց
ստեղծել կեդրոնական համադրող կոմիտէ մը, այս նպատակները
իրագործելու համար: